ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԿԳՄՄՆ Գյումրու թիվ 1 ավագ դպրոց

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Ճանաչողական արժեք ներկայացնող ուսումնական նյութի ստեղծում « Իսահակյանի սիրային քնարերգությունը» թեման ուսումնասիրելիս

Կատարող՝ Մնացյան Արմինե

Գյումրու թիվ 7 հիմնական դպրոց

հայոց լեզու և գրականություն

Ղեկավար՝ Կարինե Զիլֆիմյան

ԳՅՈՒՄՐԻ 2022

Բովանդակություն

Բովանդակություն..... 2
Ներածություն….....3
Առաջին գլուխ….....4
Երկրորդ գլուխ…..... .7
Եզրակացութուն….....13
Գրականության ցանկ….....14

Ներածություն

Մեծ գրողների անձնական կյանքը սերտորեն կապված է նրանց ստեղծագործության հետ և կյանքում ուսանելի ու դաստիարակիչ է, որքան և նրանց ստեղծագործությունը: Իսկ գրողների անձնական կյանքը մեծամասամբ ամփոփված են իրենց նամակներում: Նամակները շատ բանով են օգնում խորը ընդունելու գրողի ստեղագործության ակունքները, ավելի լավ հասկանալու այնտեղ արտահայտված խոհերն ու տրամադրությունները: Հետևաբար դրանքն խնամքով պետք է ուսումնասիրվեն, հրապարակվեն ու դառնան ընթերցողների սեփականությունը: Դա վերաբերում է և հայ ականավոր դեմքերից մեկին՝ Ավետիք Իսահակյանին:

Յուրաքանչյուր գրողի նամակագրական ժառանգությունը կազմում է նրա թողած գրական աշխարհի ինքնատիպ էջերից մեկը: Առավել հետքաքրքիր են քնարական, խոհափիլիսոփայական ներաշխարհ ունեցող բաբանաստեղծի նամակները. Որոք իրենց մեջ ներառում են այն հույզերն ու ապրումները, այն հոգեվիճակներն ու զգացմունքների ելևէջները, որոնք բանաստեղծը արտահայտել է իր բանաստեղծություններում: Նամականին օգնում է ճանաչել բանաստեղծի մարդկային կերպարը, աշխարհայացքն ու աշխարհընկալումը, ճանաչելու բանաստեղծի փոխհարաբերությունների շրջանակը, բացահայտելու այն սկզբունքները, որոնցով ղեկավարվում է մարդկային հարաբերություններում շատ արժեքներ գնահատելիս: Գրողի նամակները օգնում են գնահատելու նրա ստեղծագործության մի շարք կողմերը, գտնելու նրա պոեզիան սնող տրամադրությունները, որոնք նամակների մեջ արձակ շարադրանք են՝ բանաստեղծական մտապատկերների բովանակությամբ:

Մեր ուսումնասիրության նպատակն է.

1. Երեխաները կթափանցեն գրողի հոգու գաղտնարանները՝ բացահայտելու հուզական ու խոհական ներքին այրումից ծնված ստեղծագործությունները
2. Կծանոթանան հեղինակի անձնական կյանքի մի հատվածին
3. Կկարողանան ճիշտ վերլուծել գրողի սիրո թեմայով գրված ստեղծագործությունները, կապել նրա կյանքին

4. Կկարողանան հասկանալ ինչ է քնարական ստողծագործությունը, քնարական հերոսը:

Առաջին գլուխ

Նամակներից տեղեկանում ենք, որ Իսահակյանը մեծ սեր է տածել Շուշանիկ Մատակյանի հանդեպ, սակայն վերջինս, չնայած փոխադարձ սիրուն, մոր հորդորով ամուսնացել է ուրիշի հետ: Հոգին վեհ ու լուսե, երազանքներով լի բանաստեղծը ապրում է խորը հիասթափություն, մերժված սիրո վիշտն ու տվայտանքը, սիրո ցավից հոգին մորմոքող թախիծը անվերջ տանջում է բանաստեղծին, հոգին պարուրում կյանքի դառնության գորշ մրուրով: Շուշանիկի մերժված սերն է եղել Իսահակյանի բանատեղծություններում ատահայտված սիրո, տառապանքի ու վշտի ակունքը: Ցավը, որը մերթ պոռթկացել է, մերթ ծառս է եղել, մերթ լռել անզորությունից, մերթ երազի թևին ձգվել մինչև տիեզերական տարածքներ:

Մեգ արծիվը աչքս է կտցում,
Աչքս կարոտ՝ Շուշանին.
Անգութ գայլը սիրտս է հանում,
Սիրտս ծարավ՝ Շուշանին:
Ու ճամփեն մութ-մոլորան,
Սև ծովի բոլոր կերթա.
Շուշան յարս ձեռքերն արյուն՝
Էն տղի հետ հարս կերթա:[1]

Անգութ աշխարհում իր ցավի տակ կքած բանաստեղծը շատ բան չէր ուզում, աշխարհի անմեկնելի հմայքներն ու գեղեցկությունները իր հոգում կլինեին, եթե միայն Արազի ափին իր բոստանը լիներ, ուռենու տակ քողտիկը լիներ ու սրտով սիրած Շուշանը լիներ, իսկ ինքը ծով-քրտինք թափեր Շուշանի համար: Սակայն մարդկային կյանքի անգութ օրենքները փշրում են նրա վառ երազները, աստղե ոլորտներից թափում հույսերը, օրերի գորշ շղթայի մեջ չի մեղմվում ցավը, գնալով կարոտը ավելի է ուժգնանում և ափ որոնում...

[1] Ավետիք Իսահակյան, Երկերի ժողովածու, հ.1, Երևան 1973, էջ 33: Այսուհետ բոլոր մեջբերումները կկատարվեն հիշյալ գրքից:

Տարիների գորշ շղթայում սիրո ցավից գալավում է բանաստեծի հոգին, վիրավորված սիրելիից ու նրա հարազատներից՝ օրերի պտույտի մեջ տառապանքն ու վիշտը չի մեղմվում, սիրո ծարավ հոգին անվերջ տենչում է Շուշանին:

Դու մերժեցիր ինձ, չկանչեցիր ետ:
Եվ անցան տխուր տարիներ տխուր.
Եվ հեռվից վախով հույսերից թափուր,
Նայում էի քեզ, մենակ վշտիս հետ... (էջ240)

Բանաստեղծի հոգու ցավը կարող էր մեղմել աստվածային սարսուռով համակված վայրկյանը սիրելիի գրկում. «Մի վայրկյանը սոսկ՝ խրթին ու անհուն, ժամանակս անցած կդարձնի ինձ հետ»: Սակայն բարդ է մարկային հոգին, առավել քան արժանապատվությունը ու ինքնասիրությունը տրորված հոգին... Ամուսնական առագաստում երջանկություն չգտնելով՝ երեք երեխաների մայր Շուշանիկը վերադառնում է Իսահակյանի մոտ՝ նրանից չմարած սիրո քնքշանք խնդրելով:

Տասներեք տառապանքով ու չմարող ցավով լեցուն տարիներ, անհագ որոնումի ու անդարձ կարոտի դառն զգացողության տարիներ հույսերի ու հույզերի, կարոտի և ցասման անգութ տարիներ... և տարիների հեռավորությունից այնքան մոտ երազի թևերից կանչող տեսիլքը... «Ախ ամբողջ տասներեք տարի դու նստել ես ու բռնել իմ ողջ-ողջ ուղեղը, հոգին ու սրբապղծել իմ ողջ երկինքը... Այժմ դառնաս իմ կինը, ես իսկույն կփախնեմ քեզնից, դառնաս հին Շուշիկը՝ ես կսպանեմ ինձ՝ տեսնելու համար տանջանքների այն ծանր շղթան, որ տարիներ ի վեր ինձ կաշկանդեց...Բայց լալիս եմ հիմա, և սրտիցս արյուն է կաթում. Գնա Շուշիկ, Աստված քեզ հետ, ապրիր քո երեխաների համար, ինձ մի անիծիր, իմ անունս երբեք, երբեք մի հիշիր և ոչ մի տեղ, ոչ մի մարդու մոտ, աղաչում եմ քեզ, ինձ թաղիր քեզ համար հավիտյան, ինձ երբեք մի նայիր ազնիվ խոսք տուր այդպես վարվելու. ես թող բոլորովին չեղած, չծնված մարդ լինեմ քեզ համար հավիտյան... Պետք չէ հիշել այդ տաճարում մի ուրիշ Աստծո անուն, որի այդ տաճարը չի պաշտում, չպետք է այդ տաճարում ուրիշ ձոնի սեղան ու պատկեր դրվի, քո հոգու տաճարից թող ես լինեմ դուրս՝ ես օտար, չճանաչված Աստված եմ այդտեղ»[2]:

Այս տրամադրությունների ծնունդ է հետևյալ բանաստեղծությունը.

[2] Ավետիք Իսահակյան, Երկերի ժողովածու հ. 6, Երևան 1979, էջ 62: Այսուհետ նամակներից բերված մեջբերումները կանենք վերոհիշյալ գրքից:

Մշուշը ծածկեց դաշտերը անծիր
Դալուկ ճակատս դիր այրող բարձին,
Եվ թող ինձ մենակ, և դուռս գոցիր,
Ես չեմ կարոտնա քո վերադարձին:
Մշուշ, դու ծածկիր աշխարհքը անծիր,
-Թող, դարման մի դիր իմ խորունկ խոցին.
Եվ թող ինձ մենակ, գնա հեռացիր,
-Ես չեմ հավատում քոլաց ու կոծին: (էջ 251)

Հոգեկան երկվությունը ծանր է ու ճնշող, մի կողմից մաքրամաքուր սեր՝ տրորված ու արհամարհված սիրելիից, մյուս կողմից վիրավորված ու անարգված ինքնասիրություն, սրբապղծված մաքրություն, խաբված երազ, ցնորված պատրանք... որքան ուժ է պետք՝ լռեցնելու հոգու ճիչը, սիրո պոռթկումը, երկար սպասված վայրկյանի զգացողությունը, սիրելիին փարվելու անհագ ցանկությունը... Բանաստեղծի հոգին ցավի ու անհագ վայելումի բախման մրրկածուփ ալիքներում է լողում, ուր հոգին այնքան անզոր է սիրո մրրիկը լռեցնելու համար.

Եվ սիրո մասին խոսում ենք նույնպես,

Բայց խիստ անտարբեր ձևանում եմ ես,
Վրադ չեմ նայում, չեմ լսում ստեպ,
Որպես թե անհույզ, սառն եմ քո հանդեպ:
Բայց հալվում եմ ես սիրուց բոցակեզ,
Ուզում եմ գրկել ու համբուրել քեզ.
Հազիվ զսպում եմ մրրիկը սրտիս,
Ախ, սակայն հոգիս բերանս է գալիս... (էջ305)

Սակայն բանաստեղծի սիրտը չի ներում դավաճանության ուղին, որովհետև իր սիրո պես վարար ծփացող սիրտը « ծածկում է նրա դավաճան ու չար ուղին, ուղին արյունոտ, որ տանում է նրան ուրիշների մոտ» , որովհետև «Քաղած վարդը թփին ետ չի գա նորից, ետ չի գա հավետ ժամն անցած օրից»:

Իսկ հետո կյանքի ու տիեզերքի խենթ պտույտի մեջ լույս թևերով ճախրել է բանաստեղծի հոգին՝ «երազելով քեզ, հավերժական կին», սակայն սիրուց փշրված նրա հոգին կորցրել էր երազի ու հավատի ճամփան. կնոջական հմայքներն ու

սեթևեթանքները չէին արբեցնում նրա հիվանդ հոգին, սիրուց փշրված պատանեկան հոգին աշխարի գորշ ճամփեքին չէր հավատում սիրո ձայնին.

Միամիտ չեմ՝ հավատամ քեզ. տառապանքներս փորձ ունի.

-Մի մրահոն կույս էր քեզ պես,

Կոտրեց սիրտս պատանի...

Բանաստեղծի <<երազ-սիրո հոգին ծարավուտ ծծեց, սակայն, շրթունքը մեղքի>>, որովհետև ուրիշի գրկում նա սիրո բույր չգտավ, ուրիշի թևերին սիրո զգվանքը չզգաց, ուրիշի գրկում սիրո խայտանքը չապրեց, ու բանաստեղծի ցաված հոգին պիտի պոռթկար, որ չգտավ մի տեղ <<անմարմին մի կին>>, սերը կորցրեց «պագշոտ գրկի մեջ, ինչ որ ուներ՝ վսեմ անգին, ողջը աղտոտվեց անհուն կրքի մեջ»:

Ու որքան էլ սերերը բախեցին նրա դռները. Որքան ել սերն ու կիրքը փորձեցին մեղմել նրա վիշտը, այնուամենայնիվ.

Եվ ուր լինում եմ, քո սերն եմ երգում,

Սիրտս դեպի քեզ երգում է հավերժ.

Ուրիշին գրկած՝ ես քեզ եմ զգում,

Ուրիշի գրկում բայց քոնն եմ հավերժ... (էջ 175)

Օրերի փոթորկուն ալիքների մեջ բանաստեղծի հոգին շատ է ճաշակել դառնություններ, փորձել է մեղմել ցաված սիրտը, փարատել հոգու խռովքը, սակայն սիրո վերքը երբեք չի սպիացել, ընդհակառակը նույն ափերին նորից է բորբոքվել, նորից է տանջվել... Նորից Մատակյանների ընտանիքում փշրվել է նրա հոգին, դառնացել անգութ մերժումի ցավից...

Գլուխ երկրորդ

Իսահակյանի՝ Աննա Մատակյանին՝ Շուշանիկ Մատակյանի քրոջը, ուղղված նամակներից տեղեկանում ենք, որ մեծ բանաստեղծը Շուշանի մերժումից տարիներ հետո սիրահարվել է Աննային: Այս նամակները բացում են բանաստեղծի հոգու դռները, ուր գտնում ենք և' անսահման սեր, և' անձնազոհ նվիրում, և' կարոտ, և' կիրք ու տենչանք, և' հեռուներից եկող ցավի մորմոք: Իսահակյանի հոգեհունց տողերից

բխում է սիրո ուժը, սիրո հզոր պոռթկումը... Իսկ ինչ էր կատարվում բանաստեղծի հոգում...

Նա գրում է Աննա Մատակյանին. «Թանկագին Անիկ, ես չեմ ուզում այն, ինչ որ գուցե դու չգիտես կամ շատ քիչ գիտես,–դա այն է, որ ձերոնք ինձ չեն ուզում և այն նրա համար, որ ես աստվածային, տիեզերական սիրով սիրել եմ, պաշտել եմ ձերոնցից մեկին, որի համար այնքան եմ տանջվել ու լացել, որ դեռ արցունքս չի չորացել սրտիս մջե, և տանջանքից աչքերս չեն փայլել երիտասարդական կրակով, ես այնքան եմ տանջվել, որ ուրիշը իմ փոխարեն արդեն ինքնասպան կլիներ...»:

Աննայի փխրուն, եթերային հոգին այն եզերքն էր, որտեղ բանաստեղծը կարող էր մեղմել հոգու ցավը . «Ես քեզ երեխա էի կարծում, բայց հիմա զգում եմ, որ դու խորը ու երազուն մարդ ես, որ դու այս աշխարհից չես, որ քո աչքերի մեջ երկնքից լույս կա, որ դու ճառագայթ ես...Բաց, Աննիկ ջան, քո երկնային սիրտը իմ տանջած հոգու առաջ. Ես սրբության պես կմոտենամ քո հոգու տաճարին, կերկրպագեմ և կյանքս, կյանքս չեմ խնայի–լինես դու պայծառ արշալույս, մաքուր, խորն ու վսեմ...»:

Նույն օրերին գրված բանաստեղծությունը հուզաթաթախ այս ապրումների արտացոլանքն է.

Քույր իմ նազելի, նայիր քո դիմաց՝
Վիրավոր, ավեր սիրտս եմ բացել.
Ախ, նվիրական ինձ քո գիրկը բաց.
Եվ գուրգուրիր ինձ, ես շատ եմ լացել:
Քնքուշ ձեռներով աչերս սրբիր,
Մի թող ինձ լալու–ես շատ եմ լացել,
Ճակատիս մռայլ՝ մշուշը ցրիր,
Եվ գուրգուրիր ինձ, ես շատ եմ լացել...

Իբրև «շատ մտերիմ ընկեր–քույր–հոգի» դարձած Աննան փոթորկում է բանաստեղծի սիրտը իր զարմանալի հարցով. «Ով ես դու. իմ պատահական հրեշտակը, թե կործանող սատանան...»: Աննայի հոգում ուռճացող սերը վեհ էր, մաքրամաքուր, աստվածային, սակայն անհանգիստ հոգին չգիտեր, թե ուր կտաներ իրեն այդ սերը, նա տեսնում էր Իսահակյանի հոգում քրոջ չմարած կերպարը, նրա հանդեպ տածած սիրո կրակը... Եվ վախենում էր այն վայրկյանից, երբ նա կզգար, որ

իր առջև Շուշանը չէ, այլ ուրիշ կին, որը տեսիլք է, պատրանք, սիրո և երազի ցնորք: Իսկ այդ վայրկյանի զգացողության ցավը ավելի խորը կլիներ, քան կասկածանքը:

Բանաստեղծի՝ այս հույզերին արձագանքած նամակը մի արձակ բանաստեղծություն է, սիրո համանվագ, սիրո հորձանք. «Ասա, ինչ կարող է անել սիրող սիրտը, ինչի առաջ կանգ կառնի սիրող սիրտը: Ես անկարելին կարելի կդարձնեմ քեզ համար, ես անմահության խնձորը կբերեմ քեզ համար, ես արևը, աստղերը, ամբողջ աշխարհը կնվիրեմ քեզ, ես իմ կյանքը կտամ քեզ: Ուրիշ ինչ ես ուզում, միթե այսուհետ կարող ես տատանվել, կասկածել դեպի ինձ...» էջ 56: Աննայի նրբանկատ սիրտը զգում էր, որ այդ խոսքերը իրեն չեն ուղղված, որ իր մեջ Իսահակյանը որոնում է Շուշանին, իր մեջ տեսնում է նրան, նրա սիրո կրակն ու փոթորիկը այլ եզերք ունի: Հորդում են սիրո ալիքները . «Քո կյանքի նավն ու ղեկը հանձնիր ինձ. Ես գերասքանչ ճիգերով կաշխատեմ, կղեկավարեմ քո փխրուն, քո նազելի նավը կյանքի կատաղի ծովի մեջ, ալիքների դեմ. Կուրծքս պատնեշ կկանգնեցնեմ փոթորիկի առաջ՝ և քեզ կհասցնեմ լույսի, գեղեցկության, վեհության ափերը...» էջ 57: Վեհության ու լույսի ափերում նա տեսնում էր իր երազների կնոջը. Շուշանի հանդեպ տածած սերն էր ճախրում լույսի ալիքներում, այդ նազելի նավի մեջ նա տեսլացած Շուշանին էր տեսնում, Աննայի մոջ որոնում նրան:

Հոգեվերլուծության հիմնադիր Զիգմունդ Ֆրեյդը այս հոգեվիճակի մասին նշում է, որ զգացմունքները, որոնք, թվում է, ժամանակին մոռացվում են, իրականում նրանք կան գիտակցական ոլորտում, երբ որոշ ժամանակ անց դեպքերի բերումով հոգեկան ներդաշնակությանը վտանգ է սպառնում, գիտակցական մակարդակը դրանք արտամղում է ենթագիտակցական ոլորտ, բայց այնտեղ նրանք չեն կորչում և ամեն առիթի դեպքում արտացոլվում են երազների, տեսիլների, պատրանքների մեջ, և դրանք էլ, ըստ Ֆրեյդի, ղեկավարում են մարդու վարքը[3]:

Իսահակյանի մոտ էլ ահա նույն հոգեվիճակն էր: Նրան թվում էր՝ Շուշանին մոռացել է, ժամանակը մեղմել է ցաված սիրո մորմոքը, սակայն ենթագիտակցածան դաշտում ապրող այդ հույզերը նորից ղեկավարում են նրա էությունը: Նա տեսլացած տեսնում է սիրելիին իրականության մեջ. Հույզերի պոռթկման եզերքը, ըստ նրա, նույնն է: Այնինչ նրա առջև ուրիշ կին էր, ուրիշ աշխարհ:

[3] Фрейд, Избранные, Москва, 1990.

Աննայի՝ մի կողմից հոգեկան երկբայությունը, մյուս կոմից հարազատների հորդորները անջրպետ են ստեղծում նրա և Իսահակյանի միջև: Կրկին բանաստեղծի հոգին ապրում է այն, ինչը զգացել էր տարիներ առաջ՝ Շուշանի մերժումի ժամանակ: Նույն ցասումը, նույն զայրույթը, նույն բողոքը՝ Մատակյաններին, աշխարհին: Աննային ուղղված խոսքերը, թվում է, Շուշանի անգութ սիրտն են մերկացնում. «Անիծում եմ ինձ, որ նորից ձեր դուռը եկա և արյունվելով ետ եմ դառնում...» էջ 72:

Կնոջը ուզեցի հավատալ նորից,
Լալ ու երազել առաջվա նման.
Բայց արյունոտվեց խեղճ սիրտս նորից.
Եվ որբ մնացի ու թափառական:
Սեր, մնաս բարով, էլ քեզ չեմ նայի,
Չեմ բախի դուռդ ունայն քամու պես.
Բայց կուզենայի հավիտյան լայի,
Եվ չցամաքեր արցունքը սրտես: (էջ 214)

Աննայի նուրբ, անաղարտ հոգեկան աշխարհը հեռու էր դառը իրականությունից, այդ էր պատճառը, որ բանաստեղծը այնտեղ էր փորձում գտնել հոգևոր նեցուկ. «Ես իմ սերս որպես վերք կպահեմ հոգումս և կընկնեմ թափառելու, մի թող ինձ թափառելու, սիրիր ինձ աստվածներին վայել սիրով, պահիր ինձ քո հոգում, իմ լավ Անիկ և մղիր ինձ դեպի ճշմարտություն, դեպի բարձունքները, դեպի կատարելություն: Դու երկինք եղիր իմ հոգու համար՝ ձգտեմ, թռնեմ քեզ և մեռնեմ քո կապույտ, քո լազուր, քո ջինջ հոգում» (էջ74)

Բանաստեղծի հոգում բախվում են երկու հզոր ուժեր՝ երկրային սիրո մեղսագործ աշխարհը և եթերային, անրջական սիրո տիեզերական եզերքը: «Սերը, որ մղում է դեպի ամուսնություն, դա վատ, անասնական սեր է. Այն սերն է բարի ու վեհ, երբ մարդուն թռցնում է դեպի երկինք...» (էջ 75): Իսահակյանի բանաստեղծական հոգին չի ընդունում սիրո օրենքների երկրային շղթաները, տիեզերական անհունությունը սիրո ճախրանքին թևեր է տալիս, վեհագույն սլացք, որոնք փշրում են սիրուն գերի դարձնող բոլոր շղթաները, բոլոր կապանքները:

Բանաստեղծի հոգու և սիրո ազատության այս պոռթկումն ենք տեսնում Աննային ուղղված վերջին նամակներից մեկում. «Կարող ես հոգիս միշտ թարմ ու

սավառնող պահել, թե պիտի պահես–կաշկանդես և փշրես թևերս. Ախ, սիրիր ինձ, բայց մի տիրիր, անհագ որոնիր մի վեհ ընկերի, սիրիր, բայց սիրուն մի լինիր գերի. Սիրիր, բայց և թող և նորից գնա... Երանի նրան, ով ձգտում է դեպի աստղերը. Երանի նրան, ով սիրում է և չի հասնում, ով միշտ թափառում է ու չի գտնում...»: Նամակում արտահայտված այս մտորումներն են պոեզիայի օրենքներով թրծվել ու դարձել չքնաղ բանաստեղծություն.

Սիրտդ սրբազան վշտով թաթախիր,
Հեռավոր ափեր գնա, թափառիր,
Անհագ որոնիր մի վեհ ընկերի,
Սիրիր, բայց սիրուն մի լինի գերի.
Սիրիր, բայց և թող և նորից գնա
Ազատ ու մենակ–աշխարհիս վրա:
Եվ երազ մի վառ, շքեղ, սուրբ ու վեհ
Այս հողի երկրից հոգիդ թռցնե.
Կարոտով ձգտիր աստղերին անշեջ
Եվ մեռիր աստղե–ոլորտների մեջ... (էջ 195)

Եվ նամակում, և բանաստեղծության մեջ հյուսվում է իսահակյանական սիրո փիլիսոփայությունը, որը ինչ–որ տեղ հարազատանում է ստոիկյան փիլիսոփաների հայեցակետին: Ըստ ստոիկների՝ ցանկացած երազանք, երբ դառնում է իրականություն, կորցնում է իր առեղծվածային ուժը: Իսկ «թափառելու և չգտնելու» տեսությունը Իսահակյանի մոտ առաջացել է սիրելին կորցնելու մտավախությունից, ուրեմն նրան ունենալու միտքը թող անիրական լինի, միշտ երազի թևերին լինի, քան բախվի դաժան իրականության ալիքներին: «Մեր սերը թող լինի ոչ այս աշխարհից, հողեղեն չլինի, սիրենք իրար հեռավոր աստղերի պես. իրարուց հեռու, իրար սրտի մեջ... Մի աշխատիր ինձ տիրել, մեռցրու այդ նյութեղեն սերը, հոգով սիրիր, մտքով սիրիր... երազով սիրիր... Սիրիր ինձ և հանուն այդ լավ սիրո թող ես թռնեմ, թափառեմ, առանձնանամ, մտածեմ, լամ, հոգի դառնամ...»:

Սակայն ճակատագրի դառն հեգնանքով այս լուսավոր երազանքները երկրորդ անգամ փշրվում են Մատակյանների տան կամարների տակ. «... և ինչպես իմ կույր բախտն է, չար աստղս և դաժան ճակատագիրս, որ մի անգամ ճակատս պատռվեց այդ

անմարդասեր տան շեմքին և տարիներ հետո, աշխարհներ անցնելուց հետո նորից եկա և ճակատս խփեցի ձեր նզովված դռանը, միթե որոշված է, որ ձեր տունը պիտի լինի իմ կորստյան պատճառը, իմ գերեզմանը»: (էջ 85)

Այս «զուլում աշխարհից» դառնացած բանաստեղծը իր հոգու ճախրանքը տեսնում է միայն երկնազարդ բարձունքներում, տիեզերական ոլորտներում, աստղերի գրկում, ուր մարդկային չար ու նենգ օրերնքները անզոր են փշրելու գեղեցիկն ու վեհը, կատարյալն ու լուսավորը...

Սիրո ցավից բզկտված այս հոգին մերժում է երկրային հույզերը, մարդկային ճղճիմ զգացմունքները, նրա հոգին նորից փշրվում է սիրո մերժումից, ու նորից հնչում են բաժանումի հուզաթաթավ խոսքերը՝ ուղղված Աննային, Շուշանիկին... հավերժական կնոջը: Նույն հարցն է ուղղում Աննային, ինչ տարիներ առաջ ուղղել է Շուշանիկին: «–Ով եմ ես,–ես վեհափառ սարերի արծիվ եմ, ես կայծակ եմ մռայլ ամպերի մեջ, ես առյուծ եմ անապատի մեջ և փոթորիկ ծովերի վրա. Իմ հոգին տիեզերքի չափ մեծ՝ ամբողջապես բանաստեղծություն է. Ես բանաստեղծ եմ» էջ 83:

Այս տրամադրություններն են իշխում նրա այդ շրջանում գրված բանաստեղծություններում, բանաստեղծի հոգու խռովքը պոռթկում է՝ դառնալով բանաստեղծական ինքնատիպ դրսևորում՝ հոգեվիճակների և հույզերի բարդ անցումներով: Մարդկային նենգ օրենքներով շղթայված աշխարհը նեղ է բանաստեղծի հոգու համար, խաբկանքն ու անմաքուր սերը օտար են իր սրտին, կեղծիքն ու դավաճանությունը անընդունելի են նրա ազնիվ ու վեհանձն էությանը:

Թռնիմ խոր երկինք, դեպ աստղերն անշեջ
Եվ սիրտս բանամ անհունության դեմ.
Ես սուզվել կուզեմ գոռ ամպերի մեջ
Եվ կայծակներով զարկվել կուզեմ:
Գծուծ ու նանիր մարդկանցից հեռու,
Վախկոտ, նենգամիտ, կեղծ ու դավաճան,
Ստոր ու ստրուկ աշխարհից հեռու,
Նյութին միշտ գերի, ագահ ստության: (էջ 205)

Սիրո ու սրտի մեծ բանաստեղծը անհուն մորմոքով է երգում տիեզերքի զարմանահրաշ գաղտնիքների, աստղերի անհունության մասին՝ պահանջելով

վերադարձնել սիրո կյանքը, որ իր ցված հոգին հարություն առնի..., իր սրտի բաբախը ներդաշնակվի տիեզերական բաբախին...

Սրտի վիրավոր զգացումները, լուսավոր պատրանքները, երազանքները ու հույզերը, բազմազան տրամադրությունները ու պատկերները հավաքվում, ձուլվում են իրար՝ դառնալով մեծ կյանքի պատմություն՝ հավերժող ցավերով ու հույզերով..., հավերժող լույսով ու գեղեցկություններով:

Եզրակացություն

Իսահակյանի՝ քնարական բազմախորհուրդ ելևէջներում հյուսված բանաստեղծությունների ներքին թրթիռները բացահայտվում են նամակներում արտահայտված հոգեվիճակների և մտորումների օգնությամբ:

Նամակները կօգնեն.

1. Աշակերտին հայտնաբերելու բանաստեղծի կյանքի ու հոգու առեղծվածների ու նրբավորումների աշխարհը, որից ծնվում է տիեզերական սարսուռով համակված խոսքը՝ բանաստեղծությունը: Նամակներում անտեսանելի հոգեբանական նրբությունները աշակերտին մոտեցնում են բանաստեղծության մեջ արտահայտված գաղափարական հարցադրումներին: Այդ նրբերանգները կօգնեն թափանցելու գրողի աշխարհը, հոգեկան գաղտնարանները, երազների եզերքը, որովհետև նամակները խոսում են բանաստեղծի անձնական ներաշխարհի ներքին թրթիռների մասին:

2. Նամականին կօգնի ճանաչելու բանաստեղծի մարդկային կերպարը, աշխարհայացքը, մտածողությունը, կբացահայտի այն սկզբունքներն ու դիրքորոշումները, որոնցով ղեկավարվում է գրողը սիրային հարաբերություններում:

3. Նամակները կօգնեն առավել ճշգրտորեն գնահատելու ոչ միայն նրա ստեղծագործությունների բազմաթիվ կողմերը, այլև տեսանելի կդարձնեն ստեղծագործող կյանքի իրողությունները:

4. Աշակերտը կհասկանա, որ քնարական բանաստեղծության մեջ իշխում են անհատի խոհերն ու ապրումները:

5. Կհասկանա, որ քնարական հերոսը, որպես օրենք, բանաստեղծի անհատականությամբ պայմանավորված անձնավորումն է:

Գրականության ցանկ

1. Ավետիք Իսահակյան, Երկերի ժողովածու, հ.1, Երևան 1973:
2. Ավետիք Իսահակյան,Երկերի ժողովածու, հ. 6, Երևան 1979:
3. Антология мировой философии, том 1, Москва 1969.
4. Фрейд, Избранные, Москва, 1990.